

«18» հուլիս 2015թ.

No 1941 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ
ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը և ի կատարումն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի մարտի 28-ի N 617-Ա և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2014 թվականի ապրիլի 1-ի N 5-Ա համատեղ հրամանի (այսուհետև՝ համատեղ հրաման).

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրեն Արտավազդ Վանյանին, գլխավոր տնօրենի խորհրդական Իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավար Գայանե Սահակյանին՝ սահմանված կարգով ապահովել.
- 1) Նախագորակոչային տարիքի անձանց շրջանում կանխարգելիչ պատվաստումների իրականացման նպատակով պահեստավորված պատվաստանյութերի և պատվաստումների օժանդակ պարագաների բաշխումը իմունականխարգելման գործընթացում ընդգրկված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին՝ համաձայն հավելված 1-ի.

- 2) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում մնացորդային պատվաստանյութերի վերաբաշխումը.
 - 3) Հայաստանի Հանրապետության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների պատվաստումներն իրականացնող բուժանձնակազմի ուսուցման կազմակերպումը և իրականացումը.
 - 4) Հայաստանի Հանրապետության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում նախազորակոչային տարիքի անձանց շրջանում (15-16 տարեկան) կանխարգելիչ պատվաստումների իրականացումը սույն թվականի օգոստոսի 1-ից՝ համաձայն հավելվածներ 2-3-ի:
 - 5) Նախազորակոչային տարիքի անձանց շրջանում կատարված կանխարգելիչ պատվաստումների ու արձանագրված հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վերաբերյալ ամենօրյա տեղեկատվության ընդունումը և ամփոփումը՝ համաձայն հավելված 5-ի:
2. Մարզպետարանների առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետերին, Երևանի քաղաքապետարանի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանին (համաձայնությամբ).
- 1) Որոշել անհրաժեշտ պատվաստանյութերի պահանջարկն ըստ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում հաշվառված նախազորակոչային տարիքի անձանց թվի և ներկայացնել ամսական հայտեր Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղերին:
 - 6) Իրականացնել Հայաստանի Հանրապետության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում նախազորակոչային տարիքի անձանց շրջանում (15-16 տարեկան) կանխարգելիչ պատվաստումները՝ համաձայն հավելվածներ 2-3-ի:
 - 2) Ներկայացնել կատարված պատվաստումների և արձանագրված հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վերաբերյալ ամենօրյա

տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղերին:

- 3) Ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման հավելված 5-ով հաստատված «Առողջության անձնագրի» 4-րդ կետի՝ «Կատարված պատվաստումների (համաձայն հաստատված պատվաստումների ազգային օրացույցի)» լրացման պահանջները՝ համաձայն հավելված 4-ի:
- 4) Սահմանված կարգով իրականացնել հետպատվաստումային շրջանում նախազորակոչային տարիքի անձանց առողջական վիճակի հսկողություն, գնահատում, գրանցում և հաղորդում՝ համաձայն հավելվածներ 3-ի և 5-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Վահան Պողոսյանին:

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ



Հավելված 1
ՀՀ առողջապահության նախարարի
2015 թվականի հուլիսի 18-ի N 1941 - Ա հրամանի

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի մասնաճյուղեր/Երևանի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ	Պնևմոնոկոկալին				Հեպատիտ Ա				մենինգակոկալին	ԿԿԽ	ԱՎՓ-Ս	Նե-րար կիչ 2.0	Նե-րար կիչ 0.5	Այրման տուփ
		Մնացորդ	Պահանջ	Վերադարձ	Բաշխում	Մնացորդ	Պահանջ	Վերադարձ	Բաշխում						
I	ՀՎԿԱԿ Արագածոտնի մասնաճյուղ	146	150	0	0	42	150	0	100	150	150	150	100	480	0
II	ՀՎԿԱԿ Արարատի մասնաճյուղ	320	300	60	0	50	300	0	300	300	300	300	200	950	0
III	ՀՎԿԱԿ Արմավիրի մասնաճյուղ	360	300	100	0	79	300	0	270	300	300	300	200	1000	0
IV	ՀՎԿԱԿ Գեղարքունիքի մասնաճյուղ	190	270	0	60	74	270	0	200	280	276	280	180	1000	0
V	ՀՎԿԱԿ Լոռու մասնաճյուղ	300	270	70	0	76	270	0	190	280	276	280	180	880	0
VI	ՀՎԿԱԿ Կոտայքի մասնաճյուղ	360	250	100	0	32	250	0	220	250	250	250	160	780	0
VII	ՀՎԿԱԿ Շիրակի մասնաճյուղ	180	270	0	60	130	270	40	200	290	288	290	180	950	0
VIII	ՀՎԿԱԿ Սյունիքի մասնաճյուղ	50	150	0	80	78	150	20	100	150	150	150	100	540	0
IX	ՀՎԿԱԿ Վայոց Ձորի մասնաճյուղ	10	60	0	50	0	60	0	60	60	60	60	40	240	0
X	ՀՎԿԱԿ Տավուշի մասնաճյուղ	60	150	0	80	106	150	40	90	150	150	150	100	520	0
	Մարզեր՝ Ընդամենը	1976	2170	330	330	667	2170	100	1730	2210	2200	2210	1440	7340	0
1	ԵՊԲՀ ՊՈԱԿ «Հերացի» համ պոլ.կա	0	30	0	30	0	10	0	10	10	10	10	7	65	2
2	Թիվ 2-րդ բուժ միավորում	30	30	0	0	45	12	35	0	20	12	20	9	85	2
3	Թիվ 5-րդ պոլ-կա ՓԲԸ	0	15	0	15	0	4	0	5	10	4	10	4	40	1

4	«Նուբարաշեն պոլ-կա» ՓԲԸ	0	15	0	15	0	3	0	3	10	4	10	4	40	1
5	«Նոր Արեշ պոլ.» ՓԲԸ	0	60	0	60	0	20	0	15	20	20	20	13	130	3
6	«Սարի-թաղ պոլ-կա» ՓԲԸ	0	15	0	15	0	5	0	5	10	6	10	5	45	1
7	ԵՊԲՀ ՊՈԱԿ Մուրացան պոլ.	0	50	0	50	0	14	0	10	20	14	20	10	110	2
8	Թիվ 17 պոլ-կա ՓԲԸ	199	90	100	0	16	16	0	0	20	14	20	10	60	1
9	Գ.Նարեկացի ԲԿ պոլ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
10	Ս.Ա.ԲԿ«Արտաշեսյան»պոլ-կա	104	50	50	0	68	20	35	0	20	20	20	13	65	2
11	«Արշակունյաց»պոլ-կա ՓԲԸ	0	20	0	20	0	9	0	10	10	10	10	7	55	1
12	«Նորագավիթ» պոլ-կա ՓԲԸ	0	10	0	10	0	4	0	5	10	4	10	4	35	1
13	«Կարմիր բլուր» պոլ-կա ՓԲԸ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	60	0
14	Թիվ 13 պոլ-կա ՓԲԸ	0	25	0	25	0	9	0	10	10	10	10	7	60	1
15	Թիվ 20 պոլիկլինիկա ՓԲԸ	0	25	0	25	0	11	0	10	20	12	20	9	80	2
16	Արմենիա ԲԿ պոլիկլինիկա	210	40	170	0	76	27	50	0	30	28	30	18	90	2
17	Թիվ 9 պոլ-կա ՓԲԸ	0	40	0	40	0	19	0	15	20	20	20	13	100	2
18	Թիվ 19 պոլ-կա ՓԲԸ/մանկ/	50	60	0	10	48	27	30	0	30	28	30	18	100	2
19	Թիվ 22 պոլիկլինիկա ՓԲԸ /մանկ/	0	20	0	20	0	7	0	7	10	8	10	6	50	1
20	թիվ 16 պոլիկլինիկա ՓԲԸ	0	60	0	60	0	25	0	20	30	26	30	17	150	3
21	Թիվ 12 պոլիկլինիկա ՓԲԸ	0	45	0	45	0	16	0	20	20	16	20	11	100	2
22	Ս.Գրիգոր Լուսավորիչ ԲԿ պոլիկ մանկ.	130	90	50	0	14	41	0	0	50	42	50	28	150	3
23	Թիվ 8-րդ պոլ-կա ՓԲԸ	210	40	160	0	14	13	0	0	20	14	20	10	60	1
24	«Արաբկիր» մանկ. Պոլ-կա ՓԲԸ	0	60	0	60	0	27	0	20	30	28	30	18	150	3
25	Երևանը՝ Ընդամենը	908	860	530	530	281	340	150	165	430	350	430	241	1880	39

26	ՀՀ' Ընդամենը	2909	3030	860	830	948	2510	250	1895	2640	2550	2640	1681	9220	39
----	--------------	------	------	-----	-----	-----	------	-----	------	------	------	------	------	------	----



Հավելված 2

ՀՀ առողջապահության նախարարի

2015 թվականի հուլիսի 18-ի N 1941 - Ա հրամանի

ՀՐԱՀԱՆԳ

ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ Ա-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ

ԿԻՐԱՌՄԱՆ

Կիրառման ցուցումներ

Պատվաստանյութն ցուցված է՝

- հեպատիտ Ա-ի առումով բարձր ռիսկի տարածքներում բնակվող անձանց համար,
- հեպատիտ Ա-ի առումով ցածր կամ միջին ռիսկի տարածքներում հեպատիտ Ա-ով հիվանդների հետ շփված անձանց համար:

Ներմուծման ուղի

Հավրիքսը հեղուկ պատվաստանյութ է: Պատվաստումից առաջ 22իկը պետք է լավ թափահարել, ուշադիր զննել հեղուկը, հավաքել ներարկչի մեջ:

Պատվաստել 1,0մլ բազկի վերին դրսային մակերեսին՝ միջմկանային ճանապարհով: Զինակոչիկների և նախագորակոչիկների համար կատարվում է աջ ազդրի վերին երրորդականում՝ միջմկանային ճանապարհով: Օգտագործվում են ինքնարգելափակման ներարկիչներ /2 հատ 0.5զ/:

Պատվաստանյութի պաշտպանիչ հատկությունները սկսվում են պատվաստումից 14 օր հետո:

Բուստեր պատվաստումներ

Հեպատիտ Ա-ի դեմ երկարատև անընկալություն ապահովելու համար խորհուրդ է տրվում լրացուցիչ բուստեր դեղաչափի ներմուծում՝ առաջին դեղաչափից 6 -12 ամիս հետո: Բուստեր դեղաչափն ապահովվում է մինչև 20 տարի տևողությամբ իմունիտետ:

Համատեղելիությունն այլ պատվաստումների հետ

Անհրաժեշտություն չկա ժամանակային ինտերվալ պահպանել նախապես կատարված այլ պատվաստումներից: Կարելի է պատվաստել այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ՝ տարբեր տեղերում և տարբեր ներարկիչներով:

Եթե անհրաժեշտ է անհապաղ կանխարգելում իրականացնել հեպատիտ Ա-ի դեմ, ապա ներմուծվում է իմունագլոբուլինային պատրաստուկների հետ միասին՝ տարբեր տեղերում:

Հեպատիտ Ա-ի դեմ իմունագլոբուլինային պատրաստուկների ներմուծումը չի կարող ընկճել հակամարմինների առաջացումը, սակայն կարող է հակամարմինների տիտրը նվազեցնել մինչև 20 տոկոսով:

Հակացուցումներ

Պատվաստանյութը հակացուցված է, եթե առկա է՝

- Գերզգայնություն պատվաստանյութի որևէ բաղադրիչի նկատմամբ
- Գերզգայնություն պատվաստանյութի նախորդ չափաբաժնից:

Նախազգուշական մոտեցումներ

Պատվաստումներ չեն իրականացվում սուր, տենդով ուղեկցվող հիվանդությունների դեպքում: Արյունահոսության միտում ունեցող անձանց պատվաստումներն իրականացվում են ենթամաշկային, որի հետևանքով իմունային պատասխանը կարող է նվազել:

Ինչպես բոլոր կենդանի թուլացված և ինակտիվացված պատվաստանյութերի դեպքում՝ ապացուցված է, որ հեպատիտ Ա պատվաստումների ազդեցությունը պտղի վրա, այնուամենայնիվ՝ հեպատիտ Ա պատվաստումները հակացուցված են հղի կանանց համար: Սակայն, եթե առկա է հղի կնոջ հեպատիտ Ա-ով վարակման ռիսկ՝ պատվաստումները ցուցված են: Կրծքով կերակրումը հակացուցում չէ պատվաստումների համար:

Հետպատվաստումային ռեակցիաներ

Պատվաստվածների 10 %-ի մոտ կարող է առաջանալ ցավ /այտուցվածություն, կարմրություն/ պատվաստման տեղում, 2 %-ի մոտ՝ ընդհանուր թուլություն /մկանացավ, ջերմություն/, 1 % -ի մոտ՝ գլխացավ, գլխապտույտ:

Պատվաստանյութը պահպանվում է +2-ից մինչև +8°C ջերմաստիճանային պայմաններում: Չի կարելի սառեցնել: Պաշտպանել լույսից: Օգտագործել մինչև պիտանելիության ժամկետի ավարտը:

ՀՐԱՀԱՆԳ

ՊՆԵՎՄԱԿՈԿԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ԴԵՄ ՊՈԼԻՎԱԼԵՆՏ /23/ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ

Կիրառման ցուցումներ

Պնևմովաքս23-ը նախատեսված է 2 տարեկանից բարձր երեխաների և 50 տարեկանից բարձր անձանց շրջանում ակտիվ իմունականխարգելման համար՝ 1, 2, 3, 4, 5, 6B, 7F, 8, 9N, 9V, 10A, 11A, 12F, 14, 15B, 17F, 18C, 19F, 19A, 20, 22F, 23F և 33F շճատիպերով հարուցված պնևմակոկային հիվանդությունների կանխարգելման նպատակով:

Կիրառման սահմանափակումներ

Պնևմովաքս23-ը չի կանխում պատվաստանյութում չներառված պնևմակոկերի պատիճավոր շճատիպերով հարուցված հիվանդությունները:

Կիրառման դեղաչափ և ներմուծում

Նախատեսված է միջմկանային և ենթամաշկային ներմուծման համար: Պատվաստումից առաջ ուշադիր զննել շշկի պարունակությունը: Պատվաստանյութը թափանցիկ, անգույն և մասնիկներ չպարունակող հեղուկ է: Ֆիզիկական այս հատկանիշներին չբավարարելու դեպքում, չի թույլատրվում պատվաստանյութը ներարկել:

Յուրաքանչյուր անձի համար կիրառվում է առանձին ներարկիչ և ասեղ:

Պատվաստել 0,5մլ ձախ բազկի վերին երրորդականում /դելտայաձև մկանի շրջանում/ կամ ազդրի վերին դրսային մակերեսին /երեխաների մոտ/ միջմկանային կամ ենթամաշկային ճանապարհով: Զինակոչիկների և նախազորակոչիկների շրջանում կատարվում է 0,5մլ ձախազդրի վերին երրորդականում՝ միջմկանային ճանապարհով: Չի թույլատրվում խառնել Պնևմովաքս 23-ն այլ պատվաստանյութերի հետ մեկ ներարկչում կամ շշկում:

Խստիվ արգելվում է կատարել ներերակային կամ ներմաշկային ճանապարհով պատվաստում:

Բուստեր դեղաչափի անհրաժեշտություն չի լինում: Խորհուրդ է տրվում բուստեր դեղաչափը կատարել միայն բարձր ռիսկի անձանց շրջանում: Խորհուրդ չի տրվում պլանային կարգով բուստեր դեղաչափի կատարումը իմունոկոմպետենտ անձանց, ովքեր նախկինում պատվաստվել են Պնևմոկաքս 23-ով:

Համատեղելի է այլ պատվաստումների հետ:

Հակացուցումներ

Պատվաստանյութը հակացուցված է, եթե առկա է՝

- Գերզգայունություն պատվաստանյութի որևէ բաղադրիչի նկատմամբ
- Գերզգայունություն պատվաստանյութի նախորդ չափաբաժնից:

Նախազգուշական մոտեցումներ

Պատվաստումները չեն իրականացվում սուր, տենդով ուղեկցվող հիվանդությունների դեպքում: Արյունահոսության միտում ունեցող անձանց պատվաստումներն իրականացվում են ենթամաշկային, որի հետևանքով իմունային պատասխանը կարող է նվազել: Հատուկ զգուշությամբ պետք է կատարել սիրտ-անոթային և /կամ թոքային ծանր անբավարարությամբ անձանց Պնևմոկաքս 23-ով պատվաստելիս:

Ինչպես բոլոր պատվաստանյութերի դեպքում՝ ապացուցված չէ ազդեցությունը պտղի վրա, այնուամենայնիվ՝ Պնևմոկաքս 23-ով պատվաստումները հակացուցված են հղի կանանց: Սակայն, եթե առկա է հղի կնոջ պնևմակոկերով վարակման ռիսկ՝ պատվաստումները ցուցված են: Կրծքով կերակրումը հակացուցում չէ պատվաստումների համար:

Պնևմոկաքս 23-ը չի փոխարինում պնևմակոկային հիվանդության դեպքում իրականացվող հակամանրէային բուժմանը: Այն հիվանդները, ովքեր հակամանրէային բուժում են ստանում, Պնևմոկաքս 23-ով պատվաստումից հետո այն չպետք է դադարեցնեն:

Իմունային անբավարարությամբ հիվանդների մոտ՝ ներառյալ իմունիտետն ընկճող դեղորայք ստացողները, կարող է դիտվել թույլ իմունային պատասխան:

Պնևմոկաքս 23-ը կարող է արդյունավետ չլինել պնևմակոկային մենինգիտները կանխելու համար այն հիվանդների մոտ, ովքեր տառապում են քրոնիկ ուղեղ-

ողնուղեղային հեղուկի արտահոսքով՝ առաջացնելով բնածին արատներ, գանգի կոտրվածքներ կամ նյարդավիրաբուժական խանգարումներ:

Հետպատվաստումային անբարեհաջող դեպքեր

10%-ից ավել պատվաստվածների մոտ կարող է դիտվել՝ ներարկման տեղում ցավ (60.0%), այտուցվածություն և կարմրություն (20.3%), գլխացավ (17.6%), ընդհանուր թուլություն (13.2%) և մկանացավ (11.9%):

Պահպանման պայմանները

Պատվաստանյութը պահպանվում է +2-ից մինչև +8°C ջերմաստիճանային պայմաններում: Չի կարելի սառեցնել:

ՀՐԱՀԱՆԳ

ՄԵՆԻՆԳԱԿՈԿԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ԴԵՄ ՊՈԼԻՍԱԽԱՐԻԴԱՅԻՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ (MENCEVAX ACWY) ԿԻՐԱՌՄԱՆ

Նկարագրություն

MENCEVAX ACWY պոլիսախարիդային մենինգոկոկային պատվաստանյութ է /A,C, W-135 և Y խմբի/:

Պարունակություն

Neisseria meningitidis A	խմբի պոլիսախարիդ	50 µg
Neisseria meningitidis C	խմբի պոլիսախարիդ	50 µg
Neisseria meningitidis Y	խմբի պոլիսախարիդ	50 µg
Neisseria meningitidis W-135	խմբի պոլիսախարիդ	50 µg

Դեղաձևը

Չոր նյութը սպիտակ է: Լուծիչը թափանցիկ է, անգույն: Վերականգնված /չոր նյութի բացումը լուծիչով/ պատվաստանյութը թափանցիկ հեղուկ է:

Կիրառման եղանակ

MENCEVAX ACWY պոլիսախարիդային մենինգոկոկային պատվաստանյութը նախատեսված է միայն **ենթամաշկային** ներարկման համար:

Կիրառման ցուցումներ

Պատվաստանյութը նախատեսված է 2 տարեկանից բարձր երեխաների և մեծահասակ անձանց շրջանում ինվազիվ մենինգոկոկային հիվանդությունների (հարուցված A, C, W-135 և Y խմբերով) ակտիվ իմունականխարգելման համար:

Պատվաստումից առաջ ուշադիր զննել սրվակը: Վերականգնման համար լուծիչն ավելացվում է չոր նյութի վրա: Վերականգնելուց հետո պատվաստանյութը պետք է անմիջապես օգտագործել: Պատվաստման համար օգտագործել նոր ներարկիչ:

Համատեղելի է այլ պատվաստումների հետ:

Հակացուցումներ

Պատվաստանյութը հակացուցված է, եթե առկա է՝

- Գերզգայունություն պատվաստանյութի որևէ բաղադրիչի նկատմամբ
- Գերզգայունություն պատվաստանյութի նախորդ չափաբաժնից:

Նախազգուշական մոտեցումներ

Պատվաստումներ չեն իրականացվում սուր, տենդով ուղեկցվող հիվանդությունների դեպքում: Արյունահոսության միտում ունեցող անձանց պատվաստումներն իրականացվում են ենթամաշկային, որի հետևանքով իմունային պատասխանը կարող է նվազել:

Ինչպես բոլոր պատվաստանյութերի դեպքում՝ ապացուցված չէ ազդեցությունը պտղի վրա, այնուամենայնիվ՝ մենինգոկոկոյին պատվաստումները հակացուցված են հղի կանանց: Սակայն, եթե առկա է հղի կնոջ մենինգոկոկով վարակման ռիսկ՝ պատվաստումները ցուցված են: Կրճքով կերակրումը հակացուցում չէ պատվաստումների համար:

Հետպատվաստումային ռեակցիաներ

Պատվաստվածների մոտ դիտվում է.

- ախորժակի բացակայություն ($\geq 1/100$ մինչև $< 1/10$)
- գլխացավ, գլխապտույտ ($\geq 1/100$ մինչև $< 1/10$)
- դիարեա, փսխում ($\geq 1/100$ մինչև $< 1/10$)
- եղնջացան ($\geq 1/1000$ մինչև $< 1/100$)
- ներարկման տեղում ցավ, այտուց, կարմրություն ($\geq 1/10$)
- ընդհանուր թուլություն, ջերմություն ($\geq 1/100$ մինչև $< 1/10$):

Պատվաստանյութի պահպանում

Պատվաստանյութը պահպանվում է $+2^{\circ}$ -ից մինչև $+8^{\circ}\text{C}$ ջերմաստիճանային պայմաններում:

Չի կարելի սառեցնել: Պաշտպանել լույսից: Օգտագործել մինչև պիտանելիության ժամկետի ավարտը:

ՀՐԱՀԱՆԳ

ԿԱՐՄՐՈՒԿԻ-ԿԱՐՄՐԱԽՏԻ-ԽՈՋՈՒԿԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ

Կիրառման ցուցումներ

Այս պատվաստանյութն օգտագործվում է 12 ամսական և բարձր անձանց համար:

ԿԿԽ պատվաստանյութը փոշի է, վերականգնելու համար ավելացվում է լուծիչը՝ պատվաստվող անձանց ներկայանալուց հետո: Վերականգնված պատվաստանյութը պետք է անմիջապես օգտագործել: Բազմադեղաչափ շշիկների դեպքում թույլատրվում է օգտագործել 6 ժամվա ընթացքում, որից հետո պատվաստանյութը ոչնչացվում է:

Պատվաստումը կատարվում է 0,5մլ բազկի միջին դրսային մակերեսին ենթամաշկային կամ միջմկանային ճանապարհով: Զինակոչիկների շրջանում պատվաստումը կատարվում է 0.5մլ աջ բազկի վերին երրորդականում՝ ենթամաշկային:

Բուստեր պատվաստումներ

Երկրորդ դեղաչափը խորհուրդ է տրվում կատարել 3-6 տարեկանում:

Համատեղելիությունն այլ պատվաստումների հետ

Կարելի է պատվաստել այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ՝ տարբեր տեղերում և տարբեր ներարկիչներով:

Եթե անհատը ստացել է ներարկման ձևով իմունոգլոբուլին կամ արյան պատրաստուկներ՝ կատարել 6 շաբաթից 3 ամիս հետո:

Հակացուցումներ

Պատվաստանյութը հակացուցված է, եթե առկա է՝

- Գերզգայունություն պատվաստանյութի որևէ բաղադրիչի նկատմամբ
- Գերզգայունություն պատվաստանյութի նախորդ չափաբաժնից:

Նախազգուշական մոտեցումներ

Պատվաստումներ չեն իրականացվում, եթե առկա են սուր, տենդով ուղեկցվող հիվանդություններ, բնածին կամ ձեռքբերովի իմունոդեֆիցիտ, ձվի սպիտակուցի նկատմամբ իրական ալերգիա /անաֆիլաքսիա ձու ուտելուց հետո/:

Ինչպես բոլոր կենդանի թուլացված պատվաստանյութերի դեպքում՝ ապացուցված չէ պատվաստումների ազդեցությունը պտղի վրա, այնուամենայնիվ՝ պատվաստումները հակացուցված են հղի կանանց: Կրծքով կերակրումը հակացուցում չէ պատվաստումների համար:

Հետպատվաստումային ռեակցիաներ

Պատվաստման 5-րդ օրից հետո կարող է լինել ջերմության բարձրացում, կարճատև ռեսպիրատոր ախտանշաններ, ցան: Հազվադեպ կարող է դիտվել ավշային հանգույցների մեծացում:

Պատվաստանյութի պահպանում

Պատվաստանյութը պահպանվում է $+2^{\circ}$ -ից մինչև $+8^{\circ}\text{C}$ ջերմաստիճանային պայմաններում:

ՀՐԱՀԱՆԳ

ԴԻՖԹԵՐԻԱՅԻ ԵՎ ՓԱՅՏԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ (ԱԴՓ-Մ, TETADIF) ԿԻՐԱՌՄԱՆ

Նկարագրություն

ԱԴՓ-Մ պատվաստանյութը պարունակում է մաքրված դիֆթերիայի և փայտացման անատոքսին՝ դիֆթերիայի բաղադրիչի փոքրացված պարունակությամբ: 0,5 մլ ծավալով մեկ դեղաչափը պարունակում է 4 ՄՄ (միջազգային միավոր) դիֆթերիային անատոքսին և 40 ՄՄ փայտացման անատոքսին: Անատոքսիններն ադսորբցված են ալյումինիումի հիդրօքսիդի վրա, որպես կոնսերվանտ պարունակում է թիոմերսալ:

Կիրառման ցուցումներ

Այս պատվաստանյութն օգտագործվում 6 տարեկանից բարձր երեխաների և մեծահասակների դիֆթերիայի և փայտացման դեմ պատվաստումների իրականացման համար /ակտիվ իմունիզացիա/:

Օգտագործումից առաջ պատվաստանյութի սրվակն անհարաժեշտ է թափահարել՝ մինչև համասեռ կախույթի առաջանալը: Պատվաստանյութը պետք է ներարկել 0.5 մլ

բազկի վերին երրորդականում /դելտայաձև մկանի շրջանում/ միջմկանային: Զինակոչիկների և նախազորակոչիկների պատվաստումը կատարվում է աջ բազկի վերին երրորդականում /դելտայաձև մկանի շրջանում/ միջմկանային:

Հակացուցումներ

Հակացուցում է ԱԴՓ-Մ պատվաստանյութի նախորդ դեղաչափից առաջացած ծանր ռեակցիան (գերզգայունություն):

ՄԻԱՎ վարակակրությունը հակացուցում չէ, պետք է պատվաստել ԱԴՓ-Մ պատվաստանյութով՝ համաձայն ստանդարտ սխեմայի:

Հետպատվաստումային ռեակցիաներ

Ներարկման տեղում ցավոտություն և կարմրություն, մարմնի ջերմաստիճանի հնարավոր բարձրացում:

Պատվաստանյութն անվնաս է հղիության ընթացքում:

Պատվաստանյութի պահպանում

Պատվաստանյութը պահպանվում է $+2^{\circ}$ -ից մինչև $+8^{\circ}\text{C}$ ջերմաստիճանային պայմաններում: Պաշտպանել լույսից:

Չի կարելի սառեցնել:

Օգտագործել մինչև պիտանելիության ժամկետի ավարտը:

Բազմադեղաչափի ԱԴՓ-Մ պատվաստանյութի բաց սրվակները կարելի է պահպանել մինչև 4 շաբաթ՝ ապահովելով $+2^{\circ}$ -ից մինչև $+8^{\circ}\text{C}$ ջերմաստիճան և բաց սրվակների օգտագործմանը ներկայացվող պահանջները:

Յուրաքանչյուր պատվաստման համար օգտագործել նոր ներարկիչ:

Հավելված 3

ՀՀ առողջապահության նախարարի

2015 թվականի հուլիսի 18-ի N 1941-Ա հրամանի



ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ (15-16 ՏԱՐԵԿԱՆ) ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հ/Հ	Գործողություն	Գործողության նկարագրություն	Պատասխանատու
1.	Պատվաստանյութերի պահպանում, բաշխում	Նախագորակոչային տարիքի անձանց պլանային պատվաստումների համար անհրաժեշտ պատվաստանյութերի և պատվաստումների օժանդակ պարագաների բաշխումն իրականացվում է համաձայն ՀՀ ԱՆ հրամանի	ՀՎԿԱԿ-ի Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների բաժին
		Պատվաստումների համար պատվաստանյութերի և օժանդակ պարագաների հաշվառումն իրականացվում է գրանցամատյանում Հայաստանի Հանրապետությունում հաստատված ձևաչափով (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ 3108-Ա հրամանի համաձայն):	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ
		Պատվաստանյութերի և պատվաստումների համար օժանդակ պարագաների շարժի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտ ընթացակարգերի և հաստատված վարչական վիճակագրական ձև ՊՁ/հ-ի՝ բացակայող պատվաստանյութերի անվանումները ներառելով «Այլ» տողում	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ

1.	Պատվաստումների պլանավորում, կազմակերպում և իրականացում	Նախագորակոչային տարիքի անձանց պատվաստումներն իրականացվում են սպասարկման տարածքի պլանային պատվաստումներ իրականացնող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ
		Նախագորակոչային տարիքի անձանց պատվաստումների պլանավորումը ներառվում է բուժքույրերի «Պատվաստման ենթակա երեխաների պլանավորման մատյանում»՝ ԱԴՓ-Մ-ի սյունակում:	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ
		Պատվաստումներն իրականացվում են համաձայն հանրապետությունում գործող անվտանգ պատվաստումներին ներկայացվող պահանջների վերաբերյալ ստանդարտ ընթացակարգերի (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ 3108-Ա հրամանի համաձայն):	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ
		Պատվաստումները կատարվում են ՀՀ զինկոմիսարիատներում 15 տարեկանների կցագրումից անմիջապես հետո և ավարտվում են 16 տարեկանում՝ ապահովելով Հեպատիտ Ա, մենինգակոկային, պնևմակոկային , ԿԿԽ, ԱԴՓ-Մ, տուլարեմիա պատվաստանյութերի 1-ական դեղաչափ: Բացառության կարգով, նշված ժամկետում չպատվաստված կամ թերի պատվաստված անձինք պատվաստվում են հնարավորինս շուտ՝ մինչև ՀՀ զինված ուժեր գորակոչվելը:	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ
		Պատվաստումները գրանցվում են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության պատվաստումների ընդհանուր գրանցամատյանում՝ Հեպատիտ Ա-ն «Հեպատիտ Բ»-ի սյունակում, Պնևմոն, ԿԿԽ-ն և ԱԴՓ-Մ-ը համապատասխան սյունակներում,	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ

	մենինգակոկայինը և տուլարեմիան՝ «Այլ» սյունակում /առաջին 2 ենթասյունակներում՝ մենինգակոկային, հաջորդ 2-ում՝ տուլարեմիան/: Պատվաստումները գրանցվում են նաև «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում» /ձև 112/, Կանխարգելիչ պատվաստումների քարտում /ձև 063/ (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ 3108-Ա հրամանի համաձայն):	
	Նախազորակոչային տարիքի անձանց պատվաստումների տվյալներն ամրագրվում են «Առողջության անձնագրի» «Կատարված պատվաստումների (համաձայն հաստատված պատվաստումների ազգային օրացույցի)» սույն հրամանի հավելված 4-ում ներկայացված ձևաչափով:	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ
	Նախազորակոչային տարիքի պատվաստումների տվյալներն ամրագրվում են նաև 18 տարեկան զորակոչի ենթակա անձանց «Առողջության անձնագրի» «Կատարված պատվաստումների (համաձայն հաստատված պատվաստումների ազգային օրացույցի)» ՝ սույն հրամանի հավելված 4-ում ներկայացված ձևաչափով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինկոմիսարիատների կողմից 18 տարեկան զորակոչի ենթակա անձանց համար տրամադրված բժշկական գրքույկի 17-րդ էջում՝ դրոշմակնիքի գրառումներում: Այս նպատակով կազմակերպության ղեկավարի կողմից պատվիրվում է դրոշմակնիք՝ սույն ընթացակարգի հավելվածում ներկայացված ձևաչափ 2-ով և 10սմ x 7 սմ չափերով:	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ
	Պատվաստումներից հրաժարումները և բժշկական հակացուցումները վարվում են համաձայն Հայաստանի	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ

		Հանրապետությունում գործող ստանդարտ ընթացակարգերի (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ 3108-Ա հրամանի համաձայն):	
		Նախագորակոչային տարիքի անձանց շրջանում իրականացված կանխարգելիչ պատվաստումների վերաբերյալ ներկայացվում է հաշվետվություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտ ընթացակարգերի (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ 3108-Ա հրամանի համաձայն) և հաստատված վարչական վիճակագրական ձևի (ձև Պ1/հ):	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ
		Հետպատվաստումային շրջանում նախագորակոչային տարիքի անձանց առողջական վիճակի դիտարկումը և հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի գրանցումը, հաղորդումը և հետաքննությունն իրականացվում են համաձայն հանրապետությունում գործող ստանդարտ ընթացակարգերի (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ 3108-Ա հրամանի համաձայն): Պատվաստման օրը նախագորակոչային տարիքի անձին տրամադրվում է հուշաթերթ՝ հետպատվաստումային շրջանում առողջական վիճակի դիտարկման նպատակով /ներկայացված է սույն ընթացակարգի հավելվածում ձևաչափ 1-ով/:	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ
2.	Կանխարգելիչ պատվաստումների կատարման տեխնիկան	Նախագորակոչային տարիքի անձանց բոլոր պատվաստումներն իրականացվում են պառկած վիճակում՝ դեմքով դեպի ներքև, ձեռքերը ծալած՝ արմնկային հոդում:	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ
		Տուբերկուլինային մաշկային փորձից հետո, եթե փորձի արդյունքը գնահատվում է բացասական, ապա բոլոր պատվաստումները կատարվում են հենց գնահատման	

		օրը: Մինչ տուբերկուլինային փորձի իրականացումը պատվաստումներ կատարելու դեպքում՝ տուբերկուլինային փորձը կատարվում է կենդանի պատվաստանյութով պատվաստումից մեկ ամիս հետո: ԱԴՓ-Մ պատվաստանյութով պատվաստումները կատարվում են միջմկանային 0.5 մլ դեղաչափով՝ աջ բազկի դելտայաձև մկանի դրսային մակերեսին ԿԿԽ պատվաստումից առնվազն 2,5 սմ հեռավորության վրա: 10 դեղաչափ 22իկը բացելուց հետո պատվաստանյութն օգտագործվում է 28 օրվա ընթացքում: Անհարկի կորուստներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է նույն օրը պլանավորել նաև այլ նպատակային խմբերի պատվաստումներ: ԿԿԽ /կարմրուկ, կարմրախտ, խոզուկ/ պատվաստումները կատարվում են աջ բազկի դելտայաձև մկանի դրսային մակերեսին ենթամաշկային ներարկումով 0.5 մլ դեղաչափով: ԿԿԽ-ն լուծվող կենդանի պատվաստանյութ է, վերականգնվում է միայն այն ժամանակ, երբ ներկա է առաջին պատվաստվող անձը: Վերականգնումից հետո օգտագործվում է 6 ժամվա ընթացքում: 2 դեղաչափ 22իկը բացելուց հետո պատվաստանյութն օգտագործվում է 6 ժամվա ընթացքում: Անհարկի կորուստներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է նույն օրը պլանավորել նաև այլ նպատակային խմբերի պատվաստումներ ՎՀԱ /հեպատիտ Ա/ պատվաստումները կատարվում են աջ ազդրի առաջադրսային հատվածում միջմկանային 1,0մլ դեղաչափով:	
--	--	--	--

	Պննմակուկային պոլիվալենտ պատվաստանյութը կատարվում է ձախ ազդրի առաջադրսային հատվածում՝ միջմկանային, 0,5մլ դեղաչափով: Մենինգակուկային կոնյուգացված կամ պոլիսախարիդային քառավալենտ պատվաստանյութը կատարվում է ձախ բազկի դելտայածև մկանի դրսային մակերեսին 0,5 մլ դեղաչափով, ենթամաշկային կամ միջմկանային՝ խստորեն պահպանելով պատվաստանյութի հրահանգի պահանջը: Բազմադեղաչափ մենինգակուկային պատվաստանյութի դեպքում՝ վերականգնելուց հետո կիրառվում է 6 ժամվա ընթացքում: Տուլարեմիայի պատվաստանյութը վերականգնելուց հետո կիրառվում է 2 ժամվա ընթացքում: Տուլարեմիայի պատվաստումը կատարվում է վերմաշկային, ձախ բազկի դրսային մակերեսի միջին երրորդականում՝ 2 կաթիլ կաթեցնել 3-4սմ հեռավորության վրա, յուրաքանչյուր կաթիլի վրա կատարել երկու զուգահեռ քերծվածք /սկարիֆիկատորով/ 1սմ երկարությամբ:	
	Լուծված (կենդանի և կոնյուգացված) և կոնսերվանտներ (պահպանիչներ) չպարունակող պատվաստանյութերը բացելուց հետո օգտագործվում են 6 ժամվա ընթացքում: 6 ժամից հետո, անկախ պատվաստանյութի մնացած քանակությունից, այն ոչնչացվում է /զցվում է անվտանգ այրման տուփի մեջ/: Եթե սրվակը /շիկը ռետինե գլխիկով հերմետիկ փակված չէ, այն օգտագործվում է մինչև 2 ժամ, որից հետո ոչնչացվում է /զցվում է անվտանգ այրման տուփի մեջ/:	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ

		Եթե ԿԿԽ-ի և տուլարեմիա-ի պատվաստումները կատարվել են միաժամանակ, ապա մնացած բոլոր պատվաստումները կատարվում են առանց օրացույցային ժամկետ պահպանելու:	
3.	Հետպատվաստումային շրջանում առողջական վիճակի դիտարկում	Հետպատվաստումային շրջանում կատարվում են՝ 1) բուժաշխատողի կողմից բոլոր պատվաստանյութերի ներմուծումից հետո հսկվում է հետո 30 րոպեի ընթացքում, 2) դիտարկումներ՝ իրականացվում է բուժաշխատողի կողմից բոլոր պատվաստանյութերի ներմուծումից հետո 48 ժամվա ընթացքում, կարմրուկ և կարմրախտ բաղադրիչներ պարունակող պատվաստանյութերի դեպքում նաև՝ 6-12-րդ օրերին, տուլարեմիայի դեպքում՝ 4-15-րդ օրերին /քերծվածքի տեղում կարող է առաջանալ հիպերեմիա, այտուց, բշտեր՝ հետագայում կեղևի առաջացումով, կարող է առաջանալ նաև հարակից ավշային հանգույցների մեծացում/, 2) գրանցումներ՝ իրականացվում է բոլոր պատվաստումներից հետո բուժքույրը դիտարկում է առողջական վիճակը 3 օրվա ընթացքում և տեղյակ է պահում բժշկին՝ տեղային և ընդհանուր ՀԱԴ-երի մասին: 3-րդ օրը ռեակցիայի բացակայության դեպքում բուժքույրը կատարում է գրանցում ՀԱԴ-ի բացակայության վերաբերյալ, ԿԿԽ պատվաստման դեպքում՝ նաև 12-րդ օրը /դիտարկումը կատարում է 6-12 օրերի ընթացքում/, իսկ տուլարեմիայի պատվաստման դեպքում նաև 15-րդ օրը /դիտարկումը կատարվում է 4-15 օրերի ընթացքում/: Սովորական սպասվող և անսովոր ՀԱԴ-երի դեպքում գրանցումը կատարում է բժիշկը՝ վերը նշված օրերին:	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ

		ՀԱԴ-ի առկայությունը (թեթև և ծանր) գրանցվում է ՀԱԴ-ի առաջացման օրը:	
--	--	--	--

Հ ՈՒ Շ Ա Թ Ե Ր Թ

ՊԱՏՎԱՍՏՎՈՂԻ ՀԱՄԱՐ

Հետպատվաստումային 3 օրվա ընթացքում
չօգտագործել ալկոհոլ, չկատարել ծանր ֆիզիկական
աշխատանք, խուսափել արևի ուղիղ
ճառագայթներից:

Հետպատվաստումային շրջանում կարող են դիտվել
հետևյալ սպասվող երևույթները՝

- ջերմության բարձրացում
- ընդհանուր թուլություն
- ներարկման տեղում ցավոտություն,
կարմրություն, իսկ ձախ բազկի միջին
երրորդականում /քերծվածքների տեղում/
հնարավոր է կեղևի առաջացում:

Հետպատվաստումային շրջանում առաջացած
առողջական վիճակի ցանկացած խնդրի դեպքում
դիմել սպասարկման տարածքի
պոլիկլինիկա/ամբուլատորիա կամ զանգահարել
հետևյալ հեռախոսահամարով՝

Հ ՈՒ Շ Ա Թ Ե Ր Թ

ՊԱՏՎԱՍՏՎՈՂԻ ՀԱՄԱՐ

Հետպատվաստումային 3 օրվա ընթացքում
չօգտագործել ալկոհոլ, չկատարել ծանր ֆիզիկական
աշխատանք, խուսափել արևի ուղիղ
ճառագայթներից:

Հետպատվաստումային շրջանում կարող են դիտվել
հետևյալ սպասվող երևույթները՝

- ջերմության բարձրացում
- ընդհանուր թուլություն
- ներարկման տեղում ցավոտություն,
կարմրություն, իսկ ձախ բազկի միջին
երրորդականում /քերծվածքների տեղում/
հնարավոր է կեղևի առաջացում:

Հետպատվաստումային շրջանում առաջացած
առողջական վիճակի ցանկացած խնդրի դեպքում
դիմել սպասարկման տարածքի
պոլիկլինիկա/ամբուլատորիա կամ զանգահարել
հետևյալ հեռախոսահամարով՝

Հ ՈՒ Շ Ա Թ Ե Ր Թ

ՊԱՏՎԱՍՏՎՈՂԻ ՀԱՄԱՐ

Հետպատվաստումային 3 օրվա ընթացքում
չօգտագործել ալկոհոլ, չկատարել ծանր ֆիզիկական
աշխատանք, խուսափել արևի ուղիղ
ճառագայթներից:

Հետպատվաստումային շրջանում կարող են դիտվել
հետևյալ սպասվող երևույթները՝

- ջերմության բարձրացում
- ընդհանուր թուլություն
- ներարկման տեղում ցավոտություն,
կարմրություն, իսկ ձախ բազկի միջին
երրորդականում /քերծվածքների տեղում/
հնարավոր է կեղևի առաջացում:

Հետպատվաստումային շրջանում առաջացած
առողջական վիճակի ցանկացած խնդրի դեպքում
դիմել սպասարկման տարածքի
պոլիկլինիկա/ամբուլատորիա կամ զանգահարել
հետևյալ հեռախոսահամարով՝

ՀՀ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻՆ ԿՅԱԳՐՎԱԾ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ
ԴՐՈՇՄԱԿՆԻՔԻ ՁԵՎԱԶԱՓ

Կազմակերպության անվանումը			
	Ամսաթիվ	Դեղաչափ	Սերիա
ԿԿԽ			
ՏՈՒԼԱՐԵՄԻԱ			
ՄԵՆԻՆԳԱԿՈԿԱՅԻՆ			
ՊՆԵՎՄԱԿՈԿԱՅԻՆ			
ՀԵՊԱՏԻՏ Ա			
ԱԴՓ-Մ			
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			



Ա Ռ Ո Ղ Ջ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր
ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐՎՈՂ

1. Քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը _____
2. Ծննդյան ամսաթիվը, ամիսը և տարեթիվը _____
3. Բնակության վայրը _____
4. Կատարված պատվաստումները (համաձայն հաստատված պատվաստումների ազգային օրացույցի)

Պատվաստանյութի անվանում	Կատարման օր/ամիս/տարի	Դեղաչափ	Սերիա	Հետպատվաստումային անբարեհաջող դեպք /նշել միայն ծանր ՀԱԴ-երը/
Հեպատիտ -Բ				
ԲՅԺ				
Հեպատիտ -Բ 2				
ԱԿԴՓ -1				
ԱԿԴՓ- 2				
ԱԿԴՓ -3				
Հեպատիտ -Բ 3				
ԱԿԴՓ -4				
ՕՊՎ-1				
ՕՊՎ-2				
ՕՊՎ-3				
ՕՊՎ-4				
ՕՊՎ-5				
ՕՊՎ-6				

Կարմրուկ 1				
Կարմրուկ 2				
Խոզուկ				
ԿԿԽ -1				
ԿԿԽ- 2				
ԱԴՓ-Մ-1				
ԱԴՓ-Մ-2				
Տուլարեմիա				
ԿԿԽ				
Մենինգակոկային				
Պնևմակոկային				
Հեպատիտ -Ա				

Բժշկի մասնագիտությունը	14 տարեկան	15 տարեկան	16 տարեկան	17 տարեկան	18 տարեկան
1					
2					
3					
4					
5					

Աղյուսակ 1. ԲՕԱՍԻԿ-ի անվանում

Աղյուսակ 2. ԲՕԱՍԻԿ-ի անվանում

[illegible]